ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՀՀ, ք.Երևան, Բաղրամյան 19Ա

01.04.2024թ.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 114-րդ հոդվածը, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 123-րդ հոդվածը՝ Ձեզ ենք ներկայացնում Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազը մեկ քառորդի պահանջը՝ հասարակական հետաքրքրություն ներկայացնող՝ «Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանական Հանրապետության միջև սահմանազատման և սահմանագծման հիմնախնդիրները» թեմայով՝ 2024թ. ապրիլի 9-ին գումարվող Ազգային ժողովի հերթական նիստերի երեքշաբթի օրվա երրորդ հիմնական նիստում հրատապ քննարկում անցկացնելու վերաբերյալ:

Հասարակական հետաքրքրություն ներկայացնող նշված հարցի (թեմայի) քննարկման կարևորությունը, առաջնայնությունը և հրատապությունը պայմանավորված է, այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող անձինք Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանական Հանրապետության միջև սահմանազատման և սահմանագծման հարցում կատարում են հայտարարություններ, իրականացնում են գործողություններ և ցուցաբերում են անգործություն, որոնցով խախտում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Միջազգային պայմանագրերի մասին», «Պետական սահմանի մասին» և Հայաստանի Հանրապետության մի շարք այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված պահանջները, անտեսում են միջազգային իրավունքն ու սահմանազատման և սահմանագծման հարցերով միջազգային լավագույն փորձը, որն արտահայտված է «Պետական սահմանների դելիմիտացիա և դեմարկացիա. Այժմեական հարցեր և դրանց լուծման միջոցներ» ԵԱՀԿ մեթոդական ուղեցույցում:

Բացի այդ, Հայաստանի գործող քաղաքական իշխանությունը վերը նշված արարքները կատարում է խախտելով իր իսկ հանձնառությունը, որն արտահայտված է ինչպես իշխող ուժի՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ծրագրում, այնպես էլ գործող կառավարության 2021-2026թ.թ. ծրագրում և մի շարք այլ փաստաթղթերում: Ոչ լեգիտիմ այս արարքները ծանրագույն, իսկ առանձին դեպքերում անդառնալի վնաս են պատճառում Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանը, տարածքային ամբողջականությանն ու անվտանգությանը առհասարկ՝ առաջացնելով տագնապ լայն հանրության մոտ: Եթե սրան ավելացնենք այն, որ այս արարքները կատարվում են Ադրբեջանի չդադարող ագրեսիվ վարքագծի պայմաններում՝ զուգորդված Հայաստանի Հանրապետությանն ու հայ ժողովրդին ուղղված սպառնալիքներով, Ադրբեջանի իշխանությունների չպատժված ու շարունակվող միջազգային հանցագործություններ համարվող գործողություններով, ինչպես նաև Հայաստանի օրվա իշխանությունների կողմից Հայաստանի Հանրապետության առկա անվտանգային համակարգերը փլուզելու անթաքույց մղումով, ապա պատկերն առավել մտահոգիչ է դառնում:

Սույն պահանջը ներկայացնող պատգամավորների ներկայացուցիչն է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Արթուր Խաչատրյանը (հիմնական զեկուցող):

Առաջարկում ենք, որպես հարակից զեկուցողներ ներգրավել Կառավարության անդամներ Մհեր Գրիգորյանին և Արարատ Միրզոյանին:

Ազգային ժողովի պատգամավորներ՝

հ/հ	Անուն, ազգանուն		ստորագրություն
1.	Արսեն Օհանյան	078	
2.	Արթուր Խաչատրյան	080	
3.	Իշխան Սաղաթելյան	082	
4.	Գրիգորի Հովհաննիսյան	082	

5.	Աշոտ Սիմոնյան	089	
6.	Արթուր Գևորգյան	081	
7.	Գեղամ Զաքարյան	099	
8.	Հրաչյա Մանասերյան	098	
9.	Արթուր Սարգսյան	096	
10.	Գեղամ Ա-Հովհաննիսյան	083	
11.	Թերեզա Ալեքսանդրի Գրիգորյան	090	
12.	Հասմիկ Հակոբյան	103	
13.	Արմեն Գրիգորյան	107	
14.	Էմին Հակոբյան	094	
15.	Արամ Սարգսյան	086	
16.	Զոհրաբ Հարությունյան	100	
17.	Արթուր Բաղդասարյան	97	
18.	Վահե Բալասանյան	90	
19.	Մարտին Մարգարյան	102	

20.	[illegible]	074	[illegible]
21.	[illegible]	079	[illegible]
22.	[illegible]	084	[illegible]
23.	[illegible]	085	[illegible]
24.	[illegible]	088	[illegible]
25.	[illegible]	095	[illegible]
26.	[illegible]	077	[illegible]
27.	[illegible]	073	[illegible]
28.	[illegible]	075	[illegible]
29.			
30.			
31.			
32.			
33.			